



Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՏՆՕՐԷՆ ԽՐԱԳԻՐ

Ե Ի

ՊՆՏԱՍԻԱՆԱՏՈՒ

ՆԻՒ. Մ. ԹԻՒՂԵՆՏՃԵԱՆ

ԽՐԱԳՐԱՏՈՒՆ

Ղալութիա Բերչեմպե Բազար

Խրտի խոտի ղէմը Սամուր փոս

Ղոց Թիւ 12

ԹԵՐԹԸ 30 ՓԱՐԱՅ

Լրագրոյ նորոց բերելու համար... 60 էր:

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՀԱՅԲ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Պ. Լէյբրտի հետ Ս. Պատրիարքին ըրած յայտարարութիւնը...

Ստիւգիւ ալ Նոսի 12 սեպտեմբերին մէջ Կ. Պոլսէն օգոստ. 17/29 թուականաւ ՀԱՅ ՄՐ բարտարագրութեամբ...

Բան կայ որոյ մնասակար ըլլալը՝ մեկնութեան կ'հարօտի, իսկ բան ալ կայ որ առանց մեկնաբանութեան՝ մնասն ու թոյնը ինքիւրմէ կ'յայտնուի:

Նոսի Հայուն գրած նամակըն ալ այս վերջնոյն կարգէն է, զոր չպիտի ուզէինք յառաջ բերել, եթէ տեղական թերթերէն մին Բ. Դրան ուշադրութիւնն այդ յօդուածին վրայ հըրաւիրել հարկ գատելով, զայդ հրապարակն հանած, և ատենէ մ'ի վեր մեր ունեցած վախուն ու կասկածին իրաւացի ու հիմնաւոր ըլլալը հաստատած և արդարացուցած չ'լինէր:

Ուստի առանց մեր կողմանէ ունէ մեկնաբանութեան, լրի յիշեալ ազգամիտս գրութիւնը յառաջ կ'բերեմք ի տեղեկութիւն մեր ընթերցողաց, ցոյց տալու համար իրենց թէ օրքան իրաւունք ունէինք երբ կ'ըսէինք սակէ յառաջ թէ՛ Բ. Դրան հետ Հայոց ազգը խռով պահելու և գժտեցնելու քա-

ղաքականութիւն մը կայ, որոյ հետեանքն է նաևս հետեւեալ գրութիւնն ալ:

* * *

Խմբագիր

Թուրքիոյ Հայոց սիրտը մեծապէս նեղացաւ վերջին անգրիական կապոյտ-Տեառակին մէջ Պ. Լէյբրտի առ Լորտ Տէրպի ուղղած մէկ գրութիւնը կարդալով, որն որ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին հետ Պ. Լէյբրտի ունեցած մէկ տեսակցութիւնը կ'պատմէր:

Ամեն Ներսէս սրբազան իւր աղգակցացը զգացմանցն հաւատարիմ թարգմանը չէր եղած յայտարարելով Պ. Լէյբրտի թէ՛ «Թուրքիոյ Հայերը օսմանեան հպատակ մնալով իրենց բարօրութիւնն ու ազատութիւնը ձեռք ձգելու աւելի յոյս և աւելի կարութիւն մ'ունին, քան թէ Ռուսիոյ հպատակելով»:

Դարաւոր փորձառութիւն մը հասկուցած է Հայոց թէ ի՞նչ բան կրնան սպասել Տաճկներէն: Եթէ ասոնք թողեր են զՀայերը որ կրօնքինն դաւանին ազատ, եթէ զիրենք և թուրքիոյ բոլոր քրիստոնեայքը բռնի չեն դարձուցեր իսլամութեան կամ զանոնք չեն ոչնչացուցեր, պատճառն այն է որ իրենք ապրելու համար քրիստոնէից պէտք ունէին:

Օսմ. պատմութիւնը ցոյց կը տայ մեզ թէ քանի՛ անգամ սուլթաններ ու եպարքոսներ միտքերնին դրեր են թուրքիոյ քրիստոնեայները ընտելնել, իսկ եթէ իրենց այս դիտաւորութիւնն ի գործ չեն դրեր, մինակ վերոյիշեալ պատճառին համար է:

Ասկից զատ բաւական է անգամ մը թուրքիոյ Հայոց քաղաքային և ընկերական կացութիւնը բաղդատել իրենց Ռուսիոյ հպատակ ազգակցացը վի-

ճակին հետ, համոզուելու համար թէ 1829ին և անկէ առաջ Տաճկաստանէն առնուած գաւառաց Հայերն այս փոփոխութիւնէն բան մը չկորսնցնելէն զատ՝ ընդհակառակն շահած են ալ: Այժմ այդ գաւառաց մէջ չկան այլևս լկեալ աղջիկներ, սրբապիղծ եկեղեցիներ, տաճիկ աւաղակաց ըմպելաց գտաւթի տեղ գործածուած սըրբազան անօթներ, ցիցը զարնուած քահանայք, ջարդուած անձիք, աւարի տրուած վանքեր, արշտկած հունձքեր, կողոպտուած հօտեր, կրակի տըրուած գիւղեր, յափշտակեալ ինչք, և ինչ:

Նոսի մէջ, վերջին մարտ ամսուն, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին առ Բ. Դուռը մատուցած մէկ տեղեկագիրն հըրատարակուած էր, որ ամենայն իրաւամբ վկայաբանութիւն մը արժան էր կոչուել, որոյ մէջ ընթերցողք վերն ըսած իս խել մը ապացոյցները հարկաւ տեսած են: Արդ 1829էն ի վեր Ռուսիոյ հպատակ եղող Հայերն ազատեր են այդ աղէտքներէն, զորս իրենց թուրքիաբնակ աղգակիցներն կ'չարունակեն կրել դեռ ևս, և պիտի կրեն ցորչափ որ օսմանեան տիրապետութիւնը տեւելու ըլլայ: Եթէ այս մասին տարակոյս ունեցողներ կան՝ ահաւասիկ զիրենք համոզելու համար պաշտօնական փաստեր ալ:

Պ. Լէյբրտի վերոյգրեալ յայտարարութիւնն ընող եկեղեցականը սակից 2 ամիս առաջ գառնապէս գանգատ ըրած էր Բ. Դրան՝ ափսոսանք Տաճկաստանի Հայոցը անտանելի վիճակին վրայօք: Ներքին գործոց պաշտօնեայ ճէվտէթ բաշա վանայ կուսակալ Հասան բաշայի կ'հարցնէ թէ Պատրիարքին ըրած այս գանգատներն

ստոյգ են: Հասան բաշա ալ կ'պատասխանէ թէ, չկարծեր որ թուրքիոյ հայոցը պէտ թըշուառ, աղքատ, խեղճ, հարստահարեալ, ուտելու պատառ մը հաց չունեցող և շարունակ ֆրդաց չարագործութեանցը ենթակայ ուրիշ ժողովուրդ մը գտնուած ըլլայ աշխարհիս վերայ: Ահաւասիկ պաշտօնական ճշմարտութիւն մը, որն որ Պատրիարքին ըրած վերջին յայտարարութեանցը յայտնապէս հակառակն է:

Եւ եթէ աւելի յաղթահարել փաստ մը պէտք ըլլար համոզելու համար թէ, «Թուրքիոյ Հայերը բնաւ պէտք չէ որ ըսպասեն իրենց բարօրութիւնն ու ազատութիւնը ստանալ օսմ. հպատակ մնալով» այդ փաստն է վանայ գաւառէն 5000 Հայ ընտանեաց գաղթականութիւնը զորս Տէր Ղուկասօֆ զօրտպեան ազատեց տաճիկ զինուորականութեան բռնութիւններէն:

Ամեն Ներսէս սրբազան կը վստահացնէ զՊ. Լէյբրտ, թէ պատերազմի հրատարակութեան պահուն՝ ամենէն աւելի հայազգի երեսփոխաններն եղեր են օսմ. խորհրդարանին մէջ «Սուլթանին իրաւունքը եռանդեամբ ջատագովողներն»:

Անկեղծօրէն խօսելով, Հայոց Պատրիարքը ճշմարտութիւնը կ'լծիւրէ, երբ այս յայտարարութիւնը ընելով՝ իր առջի ըսածը ասով հաստատել կ'ուզէ, ինչու որ Ներսէս սրբազան շատ լաւ գիտէ թէ ի՞նչ կերպով կատարուեցան օսմ. երեսփոխանաց ընտրութիւնները, գիտէ թէ ի՞նչ կերպով ընտրուեցաւ Խաչընէի երեսփոխան իր քեռայրը, գիտէ նա ևս աւելի լաւ քան զայլ թէ ի՞նչ կ'արժէ այդ խորհրդարանական կատակախաղը: Ասկից զտո՛ կարելի՛ բան էր միթէ որ հայ երեսփոխաններն

իրենց մահմտական պաշտօնակցացը չձայնակցին՝ առանց ինքզինքնին վտանգի տակ դընելու : Պատրիարքն հարկաւ մոռցած ըլլալու յէ թէ ինչ եղաւ Հայ բողոքականաց ազգապետին, սահմանողական Միտհատի դուստրած այն ընդհանուր ժողովոյ միջոցին, քանի որ րանսին առաջարկութեանցը նրկատմամբ որոշում մը տայու համար : Ամեն ոք գիտէ թէ Յակոբ էֆ. սմբողջ 15 օր, չը համարձակեցաւ դուրս ելնել, փոքր ինչ ազատութիւն լեզու մը գործածած ըլլալուն համար յիշեալ ժողովոյն մէջ : Եւ ինչ էր ըսածը : Խնայարհարար և երկիւղածութեամբ դիտել տուած էր թէ, ժողովն առանց բան մը որոշելու՝ Սուլթանին պաշտօնէիցը իմաստութեանն ու հայրենասիրութեանը վստահանալով՝ անոնց ձգելու էր ընդունիլ կամ մերժել քանի որ անսին առաջարկութիւնները :

Առդ պատերազմն հրատարակուած միջոցին, Հայ երեսփոխանք այս դէպքը յիշելով, կրնային միթէ չմտախոհել միւսներուն հետ Բայց ինչքան տրամաբանական է հետեւեցնել ասկէ թէ Հայ երեսփոխանք ամենէն աւելի եռանդուն և պատգովն եղած են :

Պ. Լէյբրտի հետ Ներսէս սրբազանին այս տեսակցութիւնը երբ իմացանք, ազգակիցներէս շատ և ես, կ'հարցնէինք մեք մեզի թէ այդ եկեղեցական ինչ նպատակաւ ճշմարտութիւնը ինչպիսիք թուրքի թուրքի շոյ շոյ վտանգի կենթարկէ Եւրոպայի հասարակաց կարծեաց առաջը, Բայց վերջը գտանք հանելուկին լուծումը : Հայոց պատրիարքը պատուանը ճան մ'առնուլ կ'փախաքի եղեր, ինչու որ Յունաց պատրիարքին Օսմանիէ նշանն առնելէն ի վեր սկսած էր անհանգիստ ըլլալ : Հայերը, որք իրենց պատրիարքին սովորականէն դուրս Բ. Գուռն ըրած երթեալ կը իրենց թշուառ հայրենակցացը կրած ցաւերուն դարման մ'ստանալու նպատակին կ'վերջնային, քիչ մը քիչ չ'սպառնան իմանալով որ Ներսէս սրբազանի այնքան իրարանցումը՝ քանի մը մատ ժապաւենի համար է եղեր : Հայոց Պատրիարքը այս դէպք օր իւր ըզձացեալ վարձատրութեանն հասնելով Սուլթանը զինքն Օսմանիէի մեծ շքանշանով պատուեց : Ինչ փառք Հայ ազգին համար ինչ սիրովանք տաճկաց թշուառ զոհերուն համար : Ինչ միսիթարութիւն Ալաշկերտի և Պայագիտի մէջ սպաննուող Հայոց այրիններուն և որբերուն : Տաճկա-

կան բարբարոսութեան այդ զոհերն այլևս հանգիստ թող զբնանան :

Ներսէս սրբազան սա բաւերով շնորհակալ եղեր է Սուլթանին, «Տէր արքայ, Ձեր Օսմանիէ պատուանշանաւը զիս մեծ րեւոյթ, իմ անձիս վրայ Հայոց ազգը երախտօք լցիք (Երմէնի միլէթինի էհեա իթտինիդ)» :

Եթէ այնպիսի երկրի մը մէջ ըլլայինք, ուր ամեն ոք կարենար ազատօրէն իւր կարծիքն յայտնել, Թուրքիոյ Հայերն ամենքը մէկանց ոտք պիտի ելնէին իրենց Պատրիարքին այս վարմանցը դէմ բողոքելու, իսկ եթէ ամբողջ չկրնար ընել զայդ, մասնաւոր անհատ մը կարող է, յանուն իւր հայրենացը՝ ամենայն ուժովը բողոքել այն Հայերուն դէմ՝ որ ազգին դահիճներուն հետ միանալով զանի (ազգը) կորսնցնել կ'նային հասարակաց կարծեաց առջևը :

Նոյնն ընել կուզեմ ես ևս ներկայ գրութիւնս առ ձեզ ուղղելով, զոր հրատարակելու բարեհաճելով խնդրելով, մնամ ևն :

ՀԱՅ ՄԸ

* * *

Ստուգել չկայ Հայ մի' որ այս սողերը կարգաւէն յետոյ արդար սրտմտութիւն մը չզգայ, տեսնելով թէ ինչ մարդիկ Հայոց դիմակին տակ Հայոց ազգին վրայ անհնարին աղէտք ու չարիք բերել տալու կ'նկրատին, առիթ և զէնք տալով տաճկաց ձեռքը՝ որ վատահամբաւելու երեսն զՀայերն, ինչպէս ըրաւ Օսմանը թերթը :

Շիտակը խոստովանելու համար՝ Թանի Կ. Պօլսոյ թղթակիրքը, որ Հայ մը չէ, Նուրի նամակագիր Հայէն աւելի ուղիղ և կանոնաւոր դատաստան մը կ'ընէ Հայոց զգացմանցը վրայ, որոյ դէմ գրեցինք թէպէտ, իսկ զայն ալ այս առթիւ վաղուան թերթով հարկ կ'համարեմք յառաջ բերել :

* * *

Անցեալ օր առ խմբագրութիւնն Մասիսի ուղղած մեր մէկ դիտողութեանն ի պատասխանի Մասիս չք. աւուր թերթով կը պատասխանէ, իբր թէ ինքզինքն արդարացնելու համար, բացելով թէ՛ այդ քանի մը լրերն Մ. Գաբամաճեան էֆ. բերեր հաղորդեր է իրեն :

Արդարև այդ լրերին մեզ մենաշնորհ մը չըլլալով, մենէ զատ ուրիշներն ալ կրնային իմանալ, իսկ Մասիսի մէջ տեսնուած այդ հրատարակութեանց՝ սոսկ ԼԲԱ. ԳԻԷՆ առնուած ըլլալը՝ Լրագրոյ միայն յատուկ իմբագրական ոճէն և լրոյ շարագատու-

թենէն ու կարգէն ինքնին կը մատնուի, վասն զի ոչ Մասիս և ոչ Գաբամաճեան մեր ոճովը չեն գրեր, մինչդեռ Մասիսի այդ հրատարակածներն մեծ մասամբ և գրեթէ բառ առ բառ՝ Լրագրոյ ոճոյն յատկանիշն ու հանգամանքն ունին, մէկ մ'ալ որ Լրագրոյ այդ կրկին թիւերն Մասիսի գէ. աւուր թերթէն առաջ հրատարակուած ըլլալով, այլ ևս մասնաւոր սեղեկագրերն իրենց կտրեւորութիւնը կորուսած կըլլային :

Ասանկ յայտնի բնորոշականութիւն մը պատրաստելու համար Մասիս պատասխանելէն աւելի եթէ յուսովն պահած ըլլար՝ աւելի լաւ ըրած կըլլար :

Իսկ եթէ ատենք իրօք Գաբամաճեան էֆ. բերեր իրեն հաղորդեր է, այն ատեն իրաւունք կուեննամք ըսելու թէ Գաբամաճեան էֆ. մենէ գողցեր, և Մասիս ալ ոյդ գողցող առածին պէս քշելու յօժար գործիք մ'ըլբեր է ինքզինքը :

Բայց ինչու այսքան արգարացումն համար յոգնութիւն քաշել, միմիայն Լրագրական կանոնապահութիւն մը յարգելէն ինչոյ տալու համար . . .

Ինչ և է, Գաբամաճեան էֆ. թող դարձեալ Լրագրոյ ըստացած ու հրատարակած լուրերը բերէ հաղորդէ Մասիսի, բայց - կ'սնդրեմք - ոչ թէ Լրագրոյ ոճովը ու լեզուովը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
Նաբոլէոն Պօնաբարթի, Ս. Հեղինէ կղզւոյն մէջ, ուսաց կողմանէ Կ. Պօլսոյ տիրապետութեանը սպառնալից ու վրտանդին դէմ, ըրած մէկ քանի խորհրդածութեանց մէջէն, հետեւեալ գուշակութեան մասը յառաջ բերել կարեւոր կ'համարեմք, Յիշատակագիր Ս. Հեղինէի անուն գործէն քաղելով :

Երես 198, - Հարցուելով իրեն թէ ստոյգ է որ Ռուսաց Աղէկասնդր կայսրը թուրքիան առնելու միտք ունի, Նաբոլէոն կ'պատասխանէ, «Բոլոր իր մըտածումն ադ է : Ես ալ շատ անգամ փիճեր եմ հետք այս մասին : Առջի բերան հիացայ իւր առաջարկութեանը վրայ, ինչու որ կ'մտածէի թէ ինչքան պիտի նպաստէր քաղաքակրթութեան յառաջ տարուելուն, այդ կէս-բարբարոսներն վտարէն անդին նետելով, բայց երբ դորս ունենալիք հետեանք աչքիս առաջը բերելով տեսայ թէ պիտի զօրանար Ռուսիա իր նուաճելիք գաւառաց բազմութիւ Յոյն ժողո-

վորդներն իրեն հետ միացնելովը, ես կեցայ այլ ևս իրեն աջակցելէ, մանաւանդ անոր համար որ Աղէկասնդր կայսրը Ե. Պօլսոն իր ձեռքը պահել կուզէր, - բան մը՝ որու չէի կրնար հաւանիլ, ինչու որ միւսակ ատի կրնար Եւրոպայի հաւատարակութիւնը խանգարել : Մտածեցի որ Գաղղիա նոյն իսկ Եզրիպտոսը, Ասորիքը և Հնդկաստանն ալ առնելով, դարձեալ չէր կրնար բազդատութեան մէջ մտնել ուսաց հետ, սորա իր նոր աշխարհակալութիւններէն յետոյ, կ'մըտածէի նա ևս և ցարդ կ'մտածեմ թէ շիւսիւսային այդ վայրերն ինքն շատ զօրաւոր ըլլալով, կրնայ ըլլալ որ օր մ'ալ երեսն բոլոր Եւրոպայի վրայ քաշն : Աւստրիա արդէն կ'դողայ, Գուսիա և Բրուսիա եթէ անգամ մը միանան՝ Աւստրիոյ տարին լմնցած է, և Անգղիա ալ չ'կրնար զայդ արգելել : Գաղղիայէն ալ այժմ բան մը չ'սպասուիր, իսկ Աւստրիացիք այնքան տկար են որ շուտ մը կ'նուաճին, առանց մեծ դիմադրութիւն մը կարենալ ընելու ուսաց, որք թէ քաջ և թէ՛ համբերող ու ժուժկու են Ռուսիա անոր համար աւելի ահարկու է՝ որ բնաւ դիմադրենք ընտեղեցին ճամբել ինչ ըսել է՝ չ'գիտեր, Ռուսիոյ մէջ զինուորը միշտ զինուոր է : Ռուսն այնպիսի վայրենի ժողովուրդ մ'է, որ բնաւ հայրենիք չ'ունի, և ամեն երկիր իր ծննդական երկրէն աւելի ազէկ կ'գայ իրեն : Երբ ես մեռնիմ, կ'յարէ Պօնաբարթ, պիտի յարգեն իմ յիշատակս, ըլլալիք գուշակած և զայդ արգելել ուզած ըլլալու համար, երբ այդ վայրենիներն Եւրոպան գրաւելու երեսն :

Երես 230ին մէջն ալ Ռուսիոյ վրայօք խօսելով Պօնաբարթ, կըսէ թէ «Որ պիտի գայ, յորում եւրոպական ազգերը պիտի ճանչնն ու իմանան թէ Պօնաբարթ ինչքան ողջամտ քաղաքականութեան մը հետեւեր է, Լէհաստանի թագաւորութիւնը վերականգնել ուղղելովը, որ միակ ազգութեան աճումն արգելելու, եւ թուրք մը զնելու այդ ահարկու պատուութեանն առաջը՝ որ հաւանականաբար քիչ ատենէն Եւրոպայի վրայ պիտի երէք քաշուի : Ես այնքան չ'պիտի ապրիմ որ տեսնեմ, իսկ անոնք որ ոյլ պիտի մնան՝ պիտի տեսնեն Ռուսաց կամ Հնդկաստան քաշելով զայդ առնելն, և կամ 400 հազար խաղախաց և ուրիշ լեռնային մարդոց հետ 200 հազար

ալ բուն
րոպա մ
կամ ին
և կամ
կան է
է ըլլալի
պայի
հետ Գ
մուքն
անգամ
առնելէ
տի տան
չատակ
կիներ
նէին, ու
իրենց
րին մէջ
ապրել
ալ պիտ
չելի տե
անցնել
մութիւն
նուած է
պայի հ
մէն ան
կրկին կ
րանոր
նելու, ն
ծելու, մ
երկրին
պիտան
ուինն
կալ մ'ը
ծունեայ
նութեան
րին, աղ
նայէն զ
զեր : Իս
մեն բան
մէն ուն
կայսրը
տեղեկ
հետ խա
տրելու
քալ մ'
Իսկ
էն, ըսել
Կ. Պօլսո
և բողոք
պիտի ա
այնքան
դրեթէ
մէն ինձ
Նաբ
մտածու
թով :

ՆԵՒ
Բլէյն
Լեկրաֆ
օր հոս
թանին
դուստ
— կը
նատար
ուէր է
գտնուող
թակից
— Մէ
բաց հր
ուէր է

ալ բուն Ռուս զինուորներով Եւրոպա մտնելին . . . Ռուսիա կամ ինչպիսի պիտի կործանի, և կամ պիտի մեծնայ, և բնական է ենթադրել թէ վերջինն է ըստ իր քաղաքի և Կապուսի արյունալի կողմերն Ռուսաց հետ գացող խաղաղներն, քալմուքներն և ուրիշ վայրենիներն, անգամ մը պերճութեան համեմատելէն ետքը իրենց հետ պիտի տանին այն տեղերուն յիշատակը՝ ուր այնքան գեղեցիկ կիներ և լաւ կերակուրներ ունէին, ուստի և ո՛չ միայն իրենք իրենց բարբարոս և ամայի երկրին մէջ չպիտի ուզեն կենալու ապրիլ, այլև իրենց դրացիներն ալ պիտի գրգռեն այդ սքանչելի տեղերը նուաճելով ձեռք անցնելու համար։ Ասի պատմութիւնն ալ կ'հաստատէ, Տեսնուած է որ բարբարոսք Եւրոպայի հարաւային կողմանց հոմըն անգամ մ'առնելէն յետոյ, կրկին կրկին յարձակած են նորանոր երկրակալութիւններ քնելու, նորանոր ստերմունք գործելու, մինչև որ վերջապէս այդ երկրին տէր եղեր են։ Այդ անպիտան ուսերն՝ ամեն բան ունին կատարեալ աշխարհակալ մ'ըլլալու։ Գալ են, գործունեայ, համբերութեամբ յոգնութեան տանող, քիչով կապրին, աղքատ են և հարստանալէն զատ ուրիշ բան չեն ուզեր։ Իսկ ես կ'մտածեմ թէ ամեն բան Լեհաստանէն կախումն ունի։ Եթէ Ալեկսանդր կայսրը յաջողի Լեհացիներն հաշտեցնելով՝ Լեհաստանն իրեն հետ խառնելու, Հնդկաստանի տիրելու ճանքուն մէջ մեծ կակ քայլ մ'առած պիտի ըլլայ։

Իսկ ասկէ քանի մը տարիէն, ըսեր է Նաբոլէոն, Ռուսիա կ'Պօլտաբ, թուրքիոյ մեծ մասը և բոլոր Եւրասիայի իր ձեռքը պիտի անցնէ, և այս բանին այնքան լաւ համոզուած եմ որ գրեթէ եղած լինցածի պէս բան մէջ ինձի համար։

Նաբոլէոնի ուրիշ մէկ քանի մտածումներն ալ վաղուան թերթով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բլէյլա գտնուող Տէյլի թէլեկրաֆի թղթակից Պ. Կէյ շքոր հոս հասնելով վեհ. Սուլթանին ներկայութեանն ընդունուեր է։

— Կըսուի թէ օսմ. հրամանատարներուն պատուէր տըրուէր է Բ. Գրնէն, որ քովերին գտնուող թայմիլ բոլոր թըղթակիցներն ալ ճանքեն։

— Մէվթիպի Հիւսայունի զօրաց հրացաններն երէկ բաժնուեր է Սպարապետութենէն։

Ձինուորագրութիւնը 33 վաշտի հասեր է, 800-850է բաղկացեալ որ ըսել է թէ 27.000ի մօտ քաղաքապահ զօրք գրուած են։

— Պ. Լէյքրտի հրատարական տալու զրոյցը ստոյգ չէ։

— Պէշիքաի անգղ. նաւատորմին համար կըսուի թէ Մալթա երթալու կ'պատրաստուի։

— Անգղ. Սուլթանն անուն զրահաւոր Փըրգաթօնը հրաման ստացեր է Մալթա երթալու։ Կըսուի թէ Վիկտորիա թագուհւոյն սրդին մայրաքաղաքս պիտի գայ։

— Էտրեսի երկաթուղիով բաղմաթիւ Պուլկար գերիներ բերուելով մայրաքաղաքս, Ռուսիկանութեան դուռը բանտարկուեցան։

ՉԻՆՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Լեանթի Սուլթանայի թղթակիցը սեպտ. 22 թուականա հետեւալը կ'գրէ։

Երկուզը դեռ կ'տիրէ Սուլթանայի մէջ, Գալիին մէջ հազիւ 20 հոգի կայ, բոլոր հիւպատոսներն ու բնակիչները Ս. ժորժ գացին, որն որ Դանուբի բերդին մէկ ուրիշ ճիւղն է։ Հօրարտ բաշա Դանուբէն մինչև թուլչա զննութեան ելաւ համկալով որ ուսուք թուլչայի մօտ Սուլթանայի բերանը նաւ մը խորատուցեր են, իսոյն թօրբիլներով այս նաւը օդը հանելու հրաման ըրաւ։ Գետին բերանը ու ներսերը զետեղելու համար կ'Պոլսէն 50 թօրբիլ հասաւ։ Իսմայիլի և շրջակայից ուսական զօրքերը դէպի Տօպրուճայի ներսերը կ'քաշուին։

Բակուզա 17. Գարատաղիք երէկ Նիքոլա իշխանին ներկայութեամբ Պէհքէն թնդանօթի բռնելու սկսան։ Ասոնց շատուրութեանը նայելով քաղքին առնուելը հաւանական կ'համարուի, որմէ ետքը Թրէպիլիէն պիտի սկսին պաշարել։

Այսօր Գարատաղիք ուժգին ուժակոծութենէ մը յետոյ։ Տուկայի կիրճին մէջ Փրիշիգայի ամրոցը գրաւեցին, պահպան զօրքերը գերի վարելով։ Իշխանը իմաց տուաւ կօրիէնց ամրոցին 3 օրէն անձնատուր ըլլալու։

— Մասնաւոր լրեր կ'հաւատտեն թէ Գերմանիա կ'պատրաստուի Ռուսիոյ Լեհաստանը հսկող բանակ մը զրկել, այդ կողմերը գտնուող ուսական զօրքերուն թոյլ տալու համար որ պատերազմի դաշտն երթան։ Գերմանիոյ այդ կողմերը զօրք զրկելուն պատճառն է՝ վախճուած Լեհաստանի ապստամբութիւնը արդիւել։

Լոնտրա 15 սեպտ.— Տէյլի-Նիուզ հետեւալ հեռագրերը հրատարակէ։ «Օսմանցիք» Ռուսներէն վերստին ետ առած գիրքերուն մէջ 2 թնդանօթ զքրաւեցին։ Սքօպլէֆ զօրապետը քանի մ'անգամ օգնութիւն ուզեց բայց Լէվիցքի զօրապետը չտուաւ կարծելով թէ նա իր ձեռքին տակ բաւական զօրք ունի։ Քրիլօֆ զօրապետը պատասխանատուութիւնն աչքն առնելով 1000 մարդ զրկեց անոր, բայց այս օգնութիւնը ինչպէս նաև ընդհանուր բանակակերպողնէն զրկուած ուրիշ զօրագունք մը շատ ուշ հասաւ, երբ արդէն Սքօպլէֆի զօրաց կէսը ինկեր էր։ Եթէ Սքօպլէֆ զօրապետը իր բռնած գիրքերը կորսնցնէ, Ռուսաց վիճակը այն ատեն շատ գէշ պիտի ըլլայ, որովհետև մինչև որ նոր օգնութիւն չհասնի, չպիտի կըրնան յարձակողական գիրք բռնել։ Կրիլիցայի մտրտողը միշտ Ռուսաց ձեռքն է, որն որ Օսմանցոյ կողմանէ սաստիկ թընդանօթի բռնուած է, և զոր միւս կողմէն ուսուք կամրացնեն։

Բէշթա 14 սեպտ.— Նիկօքօլի կամուրջը դեռ մինչև սեպտ. 12 գրուած չէր, նախ պակասութիւն ըլլալով։ Կայսերական պահակազօնը հսկտ. 14էն առաջ ամբողջապէս պատերազմին դաշտը չպիտի կրնայ գրաւուիլ։ Արժանահաւատ աղբիւրէ առնելով կ'ձանուցանեն թէ զանազան պատճառներով Սերվիոյ պատերազմի մասնակցիլը ետ մնացեր է։ Չարք իր Պէշիքրատի հիւպատոսը ընդհանուր բանակակերպողն կանչեր է։ Երկաթուղիք օրը 3000էն աւելի մարդ չպիտի փոխադրեն։

Պուքէշ 15։ Տաճկներն երէկ կրիվիցայի վրայ յարձակելով, Ռուսներէն մեծ կորուստով ետ քուլեցան։ Ռուսաց կորուստն է, մինչև վերջին կուռնի՝ 12.000 հոգի մեռեալ ու վիրաւոր, իսկ Ռուսներունը 1500։ Չարք Ս. Գեորգայ պատուանշանը տուաւ կարողու իշխանին, Կրիլիցայի կուռնի մէջ ցոյց տուած գիւցաղական քաղութեանն համար, Հրաման եղաւ Ռուսներոյ բոլոր պահեստի զօրքը զէնքի տակ կոչելու։ Բլէյլայի դէմ ուժակոծութիւնը դեռ կ'շարունակէ, զոր Օսման բաշա 3 կարգ ամրութեանց դժերու պաշտպանութեանը տակ գնելին յետոյ, 14 հասալ նոր և ամուր մտրտողներ շինել տուած է շուրջը։

— Նայ Ֆրայ Բրէսէ թերթը Կրիլիցայի ամրոցը նորէն տաճկաց ձեռքն անցնելը ծանուցանող սպամ. 17 թուով հեռագիր

մը կ'հրատարակէ ալ նէ՝ ասի ստոյգ ըլլալու չէ։

— Բլէյլայի կուռնի մէջ խել մը եւրոպական լրագրաց թըղթակիցներն ալ վիրաւորուեր են։

— Վիէնայի թերթ մը կը ծանուցանէ թէ կ. Պոլսոյ սերվիական գործակատար Պ. Ռիսթիլի իմաց տրուեր է Պէշիքրատէն որ պատրաստ ըլլայ հրաման առածին պէս կ. Պոլսէն մեկնելու։

— Կ'հաւատտեն թէ Չարք իւր գերդաստանին անդամներն բանակէն առնելով, Դանուբեան բանակին ընդհանուր հրամանատարութիւնը ֆօֆման զօրապետին պիտի յանձնէ։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմի գալուէն մինչև այս առաւօտ ուեէ կարելոր լուր մը չկայ, բաց ի Սիւլէյման բաշայի մէկ հեռագրէն, որն որ՝ ուսաց գիրքերուն դէմ ուժակոծութիւնը դեռ շարունակելը կ'ձանուցանէ, թէպէտ Պասիլէթ կըսէ թէ Սվէտ-Նիքօլայի ամրոցին մէջ Ռուսք շատ նեղը մտած ըլլալով, այսօր կամ վաղը ետ քաշուելով այդ բարձունքը նորէն մեր ձեռքը թողնելին կ'ուսացուի։

Իսկ այսօրուան ամենէն կարեւոր լուրն է՝ Անգղիոյ եւ Աւստրիոյ դեսպաններուն ձեռքը՝ հաշտութեան կամ դիւանագրար մ'ընելու համար Բ. Գրան եղած առաջարկութիւնը, ծանուցանելով միանգամայն թէ Ռուսիա յօժար և արամադիր է եղեր այսպիսի բանակցութեան մը մտնելու։ Վեհ. Սուլթանն անձամբ դեսպաններէն այս առաջարկութիւնը լսելէն յետոյ, պատասխաններ է թէ, թուրքիոյ ամբողջութիւնն ու անկառութիւնը տպահովութեան տակ առնող հաշտութեան մը նախնական պայմաններուն վրայ հիմնեալ զինագաղար մը կրնայ ընդունիլ, առանց որոյ մինչև վերջին շունջը պիտի չարունակէ պատերազմը, զի այս միջոցի զիտագուլ մ'ընելը՝ Ռուսաց ժամանակ թողուլ է որ կորուստներն դարմանելով, ինքզինքնին ժողովներէն յետոյ դարունան նորէն և նոր զօրութեամբ պատերազմի սպարէզն իջնեն։

Այսպէս միայն կ'պահանջէ Տաճկաստանի շահը, որմէ գուրս ու է բան մ'ընելու անկարող եմ ըսեր է վեհ. Սուլթանը։

Իրուսունք ունիւք հաւատալու թէ Բ. Գրան հետ այս մասին սկսուած բանակցութիւններն դեռ կարուած չեն, եւ երկուստէք ընդունուելու միջոց մը կ'խորհուի։

Պիզմորքի և Անտրասիլի տեսակցութիւնն ալ ի Սպայցալով ստակ այս խնդրոյն կ'պատկանի։

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷՍԱԿԱՆ

ՀԱՏ ՎԱՐՎԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՈՅ

ԿՐԹԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՍԱԿԱՆ

ՀԱՏ ՎԱՐՎԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՈՅ

Յօրինաց

Ս. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԷՑ

ՍԱԿԱՐԿՈՒՄԻՆ ԵՆ ՎԱՆՔԱՅՈՒՄԻՆ

ԱՋԳԱՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՆՆԵՐ

Տպագրեալ Հրամանաւ

Ս. ՆԵՐՍԻՍ Ս. ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ

Սեր վարժարանաց թէ՛ նախա- կըրթարանի եւ թէ՛ զարգացեալ դասուց աշակերտք մինչեւ հիմա շունչին այնպիսի ֆրիստոնէական մը որ կարող ըլլար նոցա մտքերը դռ- հացուցել կերպիւ լուսաւորել կրօնի վարդապետութեամբքն ու օրտերնին կրթել լարոյականի վէճ սկզբուն- քովը :

Այս պակասը լեցնելու համար Ազգային կեդ. վարչութեան կրօ- նական ժողովը խնդրած է Կեր. Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոսէ Նար Պէյ՝ յարմարագոյն դասագրքեր յօրինել, որ բոլոր դպրոցաց մէջ և ամէն դա- սաստուաց ձեռքը կրօնի և քարոյա- կանի առաջնորդող գործինքը լինի, աշակերտաց համար ալ հրահանգել լինելու ամեն հանգամանքներն ու նենան :

Կրօնական ժողովոյն փափաքը լիովին կատարուեցաւ . եւ ինչպէս որ այս գործոց սկիզբը կը տեսնուի, Ամենապատիւ Արքեպիսկոպոս Պատրիարք շայրն ու կրօնական ժողովոյ քննիչ Յանձնախումբն իրենց գոհունակու- թիւնն յայտնելով կը վկայեն միան- գամայն թէ քաջուսուցն շեղինակի գործերն ամենեւեմ համաձայն են վարդապետութեան և աւանդից Հա- յաստանոց Ս. Եկեղեցւոյ . նոյն- պէս և սպազբութիւն նոցա օգտա- կար յոյժ ի փառս Հայաստան Եկե- ղեցեաց և յուսումն ուխտի մանկանց վարժարանաց Ազգին :

Այս գովեստները բաւական եւ բաշխուողութիւն են թէ՛ Սրբազան շեղինակին իրական արժանեաց և թէ՛ սոյն Գրաստարոց խնամք և ընտ- ըրելագոյն ռճով յօրինուած ըլլալուն օրոց համար իբր տէր-հրատարակիչ շինարարներն ոչ ծախք և ոչ աշխա- տութիւն, որպէս զի այս գրքերը յարմարաւոր պատկերօք և վայե- լուչ սպազբութեամբ ի լոյս ընծայ- ուին :

Քաջայոյս եմք որ այս ֆրիստո- նէականները Ազգին ընդունելու- թեանը պիտի արժանանան, մանա- լանդ կրթարանը, որ ոչ միայն Գպրոցաց ալ ընդհանրութեան ևս կարի օգտակար պիտի լինի . քանզի Բնասանկան ընտիր հրահանգներ կը պարունակէ . որոց միջոցաւ միայն կրնամք յուսալ թէ օր մը մեր սու- ները Նախնական դպրոցաց նմանե- լով պիտի կարենան զուգընդաց քայլել վարժարանաց հետ և անոնց ընթացիցը նպաստել ըստ կարի : Լուսաւորեալ Ազգերն այս միջոցով զարգացան, որ ցարգ անոր օգուտ- ներն ալ կը վայելեն :

Ճ. ՍՐԹՄԵԱՆ

Կը ծախուի գրաւածառաց խա- նութիւնքը ,

Ի Գ Ի Ն
Նախնական ֆրիստոնէական 50
Կրթական ֆրիստոնէական 80
Կեդրոնատեղին է Փարիզու գը- րատուրը Չազմագըլար . Յակոբ- եան խան թիւ 13 :
Գպրոցաց համար մեծ քանա- կութեամբ գնողներուն՝ հարիւրին 10 զեղչ պիտի ըլլայ :

ԾՈՎԷՆ ՉԸ ԲՈՆՈՒԵԼՈՒ ԴԵՂ ԲԱՊԱՂՐՈՒԹՂԱՄԸ

Լ. ՏԻՆԵԱ ԴԵՂԱԳՈՐԾԻ
Ծովային ճանբորդաց հա- մար անհրաժեշտ եղած սոյն հեղուկը որ ամեն անգամ ծովէ բռնուելուն մէկ խահուէի դը- գալ մը սոյն դեղէն աւանդով, կրկին չափովը պարզ ջրի մէջ խառնելով խմած ատենը մարդ- վերատին իւր հանգարտ ու ա- ուղջ վիճակը կատանայ, կը գտնուի Լ. Յիւնեայի դեղարա- նը, Ղալաթիա Մեծ փողոց, թիւ 108 մէկ շէշ 2 ու կէս փր- գնով :

Table with 2 columns: Item name and Price. Items include Բաց, Գոց, Բարձր գին, Ծած գին, Փոխ. 65ր, Մանձատոմս, Սօսիթէ Ժէնէրալ, Սօսիթէ Սթօմախ, Պանք տը Բօնաթ, Քրէտի Ժէնէրալ, Թրամիլեյ, Բուս. Երկաթուղի, Բուս. կարօն, Քօնս., Տոկոս, Բըբօր, Հէվալէտիզ

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՅ

Table with 2 columns: Item name and Price. Items include Անգղ. ոսկի, Գաղղ. », Բօլ, Քարպօն արծաթ, Քրքմից, Հինգնոց, մէթալիք, Ճերմակ մէկիւս, Պղինձ, Թղթարգամ

Տ Ի Վ Ա Ն Ը ՊԷԼԱՊՈՒԹ ԻՌՆԱՄԱՆԸ

Սոյս գրկոյլը որ հանգու- ցեալ Յակոբ Նամի էֆէնտիի տաճկերէն բանաստեղծութիւն- ները կ'աղբրուեսկէ, կը ծախուի Հայ գրաւածառաց քով գին մէկ քառօրդ թղթադրամ :

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ ԳՏՆՈՒԱԾ ՈՒ ՓԱՆՍՍԷ

Կողուած ցաւի դեղը բո- լորովին բուսեղէններէ բաղադ- րուած ըլլալով թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կ'գործածուի ու բաղմամբիւ ցաւեր ու հիւան- դութիւններ շուտով կը բժը- կէ, ինչպէս որ վարը յիշուած է : Ամեն տեսակ ֆոփի, Լս- տամոքսի, մէջքի կամ Աղիք- ներու ցաւեր . ու նաև Թանջը, ֆօլէրա և այլ ամառուան հի- ւանդութիւններ ունեցողները այս դեղէն խմելու են հետևեալ կերպով : Կէս գաւաթ ջու- րի մէջ, դիր ապուրի դրգա- լէն աւելի շաքար, վրան լե- ցուր անուշի դրգալ մը Փա- նասէ՝ աղէկ մը խառնէ ու խմէ :

Կոկորդի հիւանդու- թեանց, և Աւուցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ եր- կու ժամը հեղ մը մէկ կամ երկու անուշի դրգալ այն բաղադրութեան խմէ : Յօդա- ցաւի ըլումամբիզմ, Ատքի ցա- ւի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կոնակի ցաւերու հա- մար դուրսէն Փանասէ քսելով աղէկ մը չիւելու է : Ակուայի ցաւի համար քիչ մը բամպակ Փանասէի մէջ թաթխելով ցա- ւած ակուային վրայ զնելու է : Ամեն ատեն երբոր ցաւի մը համար դուրսէն Փանասէ քսել հարկ ըլլայ, եթէ քիչ մ'ալ խմուի աւելի շուտ բը- ժըչկութիւն կը լայ :

Մարմնոյն այրուած կամ ձմրուած տեղերը բժշկելու համար վտանգը պատահածին պէս Փանասէն վրան աղէկ մը լեցնելու է : Դանակով և յն կտրուած վերքերը բժշկելու համար արիւնը չի սրբած շու- տով մը վէրքը կ'ապերու և կա- պին վրայէն Փանասէ լեցնելու է մինչեւ որ լաւ մը թրջի : Փանասէ նաև արեան չըջանը կարագայնէ ու բոլոր բնու- թիւնը կը զօրացնէ :

Այս դեղին օգտակարու- թեանը վրայ երկարօրէն գրել աւելորդ կը համարիմք . գոր- ծածոնները զայն միշտ կը գո- վեն, ու զօղը կրնայ անձամբ փորձել . գինն աժան է : Կը ծախուի Մինասեան և Ընկե- րաց Ամիրկեան վաճառատու- ները ի Ղալաթիա Կ. Պօլսոյ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ ԽՈՒՅՆ ՏԸ ՄՐԻԳՈՒՐ ՄԱՐԻՕՆ ՏԸ ԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎ ԱՆՈՒԹԻՒՆԸ

Թարգմանեաց Գր. ԶԷԼԵԿԵՐԸ

Սոյն նշանուոր վէպին հա- յերէն թարգմանութեան հը- րորդ հատորն ալ Պօլսո հասած ըլլալով, կ'ծախուի Ս. Ղ. եւ Եղազմածեան գրատուրը Եֆնի- ձամի Զիլինկիլը ձատտէսի թիւ 2, և ուրիշ գրաւածա- ռաց քով :

Գին 2 Քր. Ամբողջ գործը 4 հատորէ պիտի բաղկանայ :

Ս. ՂԵՆՈՆԴԵԱՆՑ ԳԻՇԵՐՈՒԹԵԱՅ ՎԲԺՐՆ. ՅՄԱՄԱՇ

Օգոստոս ամսոյ հինգերորդ օ- րը վարժարանիս արձակուրդի ժա- մանակը լրացաւ, բայց աշակերտք հաղիւ մէկ երկուք վերադարձան, որուն պատճառ կերելի թէ երթեա- կութեանց համար ճանապարհի կաս- կածները և ժամանակի ձախորդու- թեանց հետզհետէ ծանրանալը պի- տի ըլլայ :

Կը յայտարարեմք թէ՛ Ս. Ղե- անդեանց վարժարանս բարեկարգ- եալ և հետևողէն արդիւնական վարժարան մ'ըլլալու համար, բաց- մանէն մինչեւ ցայսօր ամեն կարե- լի զոհողութիւն ըրած է վանքը, շահ միայն համարելով իրեն դուա- կաց դատարարելու : Սակայն ե- թէ ձեռողաց մեծ մասն ո՛ր և է կասկածներով գաւալինին չ'ոյտիտի զրկեն, ինչպէս մինչև ցայսօր, տա- րակոյս չկայ թէ վարժարանը միայն ժառանգաւորաց համար բաց պիտի համարուի :

Թողապետաց համար, յայտա- բարութեան թուականէն սկսեալ, սակաւին 20 օր ալ կ'ապասեմք, և այս միջոցին կը հրաւիրեմք ծնողք- ները՝ որ օր յառաջ փութան, վանք- թին միաբաններէն Սրժ. Գեորգ վարդապետի հետ բանակցել, որ կը գտնուի Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին ամեն օր ժամը ձէն մինչ- չեւ 10 :

Վէտք է դիտան ծնողք՝ որ երթեա- կութեանց համար ճանապարհի վը- տանգները ապահովելու հոգ պիտի տարուի, և քիչ թողապետներով ալ վարժարանը բարեկարգ պահելու համար բնաւ ձախք պիտի չիւնայուի, միայն թէ աշակերտաց թիւը դոնէ 30էն չկապուի :

Կ. Պօլսէն և այլ քաղաքներէ փոքր ինչ հեռաւորութիւնը թէ և ունց համար անհանց թուի, սա- կայն կիրպ մը բարիք է ծնողաց աչ- քէն և զբօսալից վայրերէ հետի ան- փոփ և անզբաղ մտօք միայն ուս- ման պարապելու կողմանէ :

Կարևոր ուսմանց տեսակերուն ամենը, և Եղուներէն միայն հայե- րէն, գաղղիերէն և տաճկերէն կա- ւանդուին :

Մշակերտաց կեանքն ու սուղ- ջութիւնը խնամով պահպանելու համար, վարժարանս իւր մէջ յա- կապէս մշտնջինաւոր բժիշկ կը պա- հէ վկայեալ և յաջողակ, և բաւա- կանաչափ զեղարան :